

Հեղինակը?—Տաճիկ փաշա. բոլգար միանձնուհու չիշարակարանը. փոխադրեց Գ. քահ. Մկրտումեանց. արտարպած Գրականական և պատմական հանդիսից. Մոսկա. տպարան Ք. Բարխուզարեանցի.
1896 թ. 33 էջ. գինը 15 կոպէկ:

Բողաբարական կեանքից վէպեր, մանաւանդ թէ՛ պատկերներ ու վէպիկներ մի ժամանակ լաճախ էին երևում մեր թարգմանական գրականութեան մէջ: Այդ գրածների նիւթը զլիսաւորապէս բոլգարների անկախութեան համար մղած կռիւներն ու ջանքերն են. կռիւ հերոսները, նրանց տենդոս գործունէութիւնն ու ճիգերը, սրանք են այդ գրածներում տեղ բռնում. և այդ բոլորը ասեղնագործւած են բոլգար ժողովրդի իրաւագուրկ ու ճնշւած կեանքի կտորի վրա: Այս տեսակի հրատարակութիւնները մեր ընթերցող հասարակութիւնը միշտ լափշտակութեամբ է կարդացել: Մեր գրախօսելիք գրքովը իր նիւթով ու ձևով այդ կարգի գրածներիցն է:

Սա մի լուզիչ հետեանք է այն քսորմնչիլի բռնութիւնների, որ լաճախ կատարում էին դաճիկները Բողաբարիւում, այն՝ Դոստոևսկու աւած՝ «արտիստական չարագործութիւնների» աշխարհում: Սա մի միանձնուհու կեանք է. տխուր ու ծանր կեանք, մի նոյնքան ծանր դէպքի հետ հիւաւած:

Միանձնուհուն դեռ շար մտադղ հասակում փախցնում է մի թուրք իրանց հարևան Բոթանի հետ «Ստամբուլում» վաճառելու համար: Փախցրածների խմբում է լինում և Բո-

ժանի եղբայր Ստամենը: Երկար տարածութիւնը նրանց կորել են տալիս ոտով, առանց նախելու, որ չոգնել, ուժասպառ են եղել, ոտներն ուռել են: Կալարաններից մէկում Ստամենը փորձում է փախել. բայց չուտով բռնում, քո՛ջ աչքի առաջ ստեկալի տանջանքներ տալիս, արնաթակ անելով նրա ուռած ոտները: Խումբը համում է տեղ. նրանց վաճառի են դնում, նրանց նախապէս լաւ մաքրել-լողացնելուց լետու. աղջիկները մերկ՝ միայն մի շղարչ վրաները, որ ամեն գնել ցանկացող բարձրացնում է, «սպրանքը» լաւ տեսնելու համար: Միանձնուհուն ու Ստամենին գնում է մի փաշա, իսկ Ստամենի քրոջը՝ Բոթանին փախցնողն ընծալում է մի ուրիշ պաշտօնեալի:

Ստամենը փաշալի ամենասիրելին է դառնում. որդու պէս սիրում ու կրթում է նրան թրքական ոգով. իսկ միանձնուհու Նալդօն մտնում է հարեմ. Նկարագրած է՝ թէև կարճ՝ հարէմի անգիտակցական, անոգ ու ցոփ կեանքը: Մտնելու օրից Նալդօն ագում է այդ կեանքը, շարունակ գրքեր է կարդում և հաւատարիմ մնում հայրենի կրօնին: Փաշան Ստամենին պսակում է Նալդօնի հետ. բոլգարուհին լաջողում է վառել նորից Ստամենի հանգչող սիրտը հայրենիքի լիշտակներով: Ստամենը վճռում է

միայն փառալի մօր ու իր զիրքի շնորհիւ ձեռքից եկածն անել հայրենակիցները համար»

Ստամբնը փառա է դառնում ու տեղափոխուում Փլիլիպոսով, ուր շուտով բարի մարդու և արդար կառավարչի անուն է հանում: Ալստեղ նա աւելի եռանդով է կաշում իր սրտին մօր բռնած «գործին»: Նրան օգնում է Իզմաիլ փառան: Սա Ստամբնին առաջարկում է կնութեան առնել մի որբ աղջիկ՝ Զմրութին, որ նրա տանն է ապրում «Գործին» չմասնելու համար Ստամբնն ընդունում է առաջարկը, մանաւանդ որ աղջիկն էլ շատ հեղ է, բարի ու սիրուն: «Գործի» համար է նորնպես, որ աղ դէպքից դժգոհ Նալգօն հաշտուած է ամուսնու երկրորդ կին բերելու հետ:

Ստամբնը մարդ է ուղարկում Բողաբուր, որ իր ու Նալգօի ծնողները գան. խեղճ Զմրութին է միայն տխուր. նա չգիտէ՝ ովքեր են իր ծնողները: Ամուսնուց թաքուն նա մի նամակ է գրում Իզմաիլ փառանին, որ եթէ գիտէ լալտնի թէ ովքեր են եղել իր ծնողները: Ցանկալի հիւրերը գալիս են. վերջ չկալ ուրախութեան: Ստամբնի մալը հառաչելով կանչում է. «Բոժան, իմ աղջիկս, որտեղ ես ալում...» Զմրութի գլխով մութ չիղողութիւններ են անցնում. ու երբ լսում է Ստամբնի մօր խօսքը թէ «Իմ Բոժանը մարմնի վրալ մի նշան ունէր»՝ ուշաթափ ընկնում է: Նոյն բոպէին մորող Իզմաիլ փառալի ծառան շարած Ստա-

մենին տալիս է մի նամակ, ուր ասուած է թէ Զմրութը նրա քուր Բոժանն է...:

Նոյն գիշերը Զմրութը մի տղալ է բերում, ու իր նորածնի հետ տան առաջ հոտող Մարիցա գետն է ընկնում. մանուկը խեղդում է, մօրն աղաղում են: Նալգօն ու Բոժանը, որ սաստիկ չուզում ենքերից խելագարում է, տեղափոխում են մի բողաբական միաստան, իսկ Ստամբնը անլալ կորչում է. ասում են՝ բանտարկում է սերբերին օգնելու համար ու բանտում մեռնում:

Ահա գրքովի նիւթը: Գեղարուեստական տեսակէտից մի շատ թուլ գրածք է. բայց կան գրածներ, որոնք թէև գեղարուեստական չեն, սակաւն չուզում են ընթերցողին հէնց միայն իրանց նիւթով: Ալս դէպքն ինքնատիւքեան մի չուզիլ դէպք է և տպաւորութիւն անող, մանաւանդ որ պարմած է անդարդ ու պարզ ձևով: Ալստեղ գեղարուեստ չկալ. և հեղինակի նպատակը գեղարուեստը չէ. նա ուզում է ազդել ու չուզել...:

Գրքովի լեզուն վար չէ: Երեսին գրած է «փոխադրութիւն», բայց ո՞վ է հեղինակը, և ինչ պիտի հասկանանք «փոխադրութիւն» կարգալով՝ չգիտենք. արդեօք սա մի կրճարում է թէ աղաղ թարգմանութիւն՝ լալտնի չէ:

Ինչ և է՝ տարածելու արժանի գիրք:

Ն. Աղբալեանց